



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասուրյուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՔԸՆԱԳՈՎՈՅՆ ԼՈՒՍՎԱՐԹԻԹՑԵՐՆ ԳԼԽԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՑՈՒՆ
ՔՈՂԱՌՈՒՄԱՀԱՎՈՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՅԲԻՆԵՏ



ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ
ՀԱՍՏԱԿԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

(ՄԵԹՈԴԱԿԱՆ ԹԵԶԻՍ-ՀՐԱՀԱՆԳՆԵՐ)

CHIREDI 11/20/86
RECORDED BY DIASTOOL
1986

RECORDED BY DIASTOOL

ՔԸՆԸ ՀՅԱՆԿԱՆ ԼՈՒՇՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԾԱԾԱՐ ՎԵՐՏԱՆԻԹՑՈՒՆ
ՔԱՂԱԿԱՆԱԴԵԱՎԱՎՈՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՅԱԲԻՆԵՑ

491.99(07)


Մ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ

ՀԱՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

A
1
393.6

(ՄԵԹՈԴԱԿԱՆ ԹԵԶԻԱ-ՀՐԱՀԱՆԳՆԵՐ)



Հը. № 1277.

Գրառեպվար № 5074 (բ):

Տիրամաժ 3000:

Գետհասի տուղին տպարան Վաղարշապատում:
Պատվեր № 56:

I. ՊԱՌԱՑԻՆ-ԾՐԱԴՐԱԿԱՆ

1. Հանրակրթաբանների պարապմունքների սիստեմը կոմպլեքսային եւ կ վոչ առարկալական։ Այդ պատճառով մայրենի լեզուն («Դեպի նոր կյանք»-ը և «Խորհրդային գյուղ»-ը սիայն հայերենի դասագիրք են) պետք ե անցնել վորպես կոմպլեքսի մի մասը և վոչ անջատ՝ իրրե առանձին դիսցիպլին։

2. Դրանից բղխում ե այն, վոր ուսուցիչը նախ և առաջ պիտի լավ ուսումնասիրած լինի ամբողջ ծրագիրը, պարզ պատկերացնի այդ ծրագրի պատկերի ամբողջականությունը և հիմնական գրույթը, վորպեսզի նա կարենա մայրենի լեզվի տեղն ու դերը վորոշել այդ ծրագրի սմբռողջության մեջ, վորովհետեւ դրանով ե պայմանավորված այն հանգամանքը, թե ամբողջ ուսումնական տարվա ընթացքում հայերենից ինչը ինչ ծավալով և ինչ խորությամբ պետք ե անցնել։

3. Այս բանը հնարավորություն կտա ուսուցչին կազմելու միայն հայերենի տարեկան պլանը—այնպես, վոր հայերենն իր ներքին ուրույն

ամբողջականությունն ու համակարգվածությունն
ունենալով հանդերձ՝ նպաստի ամբողջ կոմպլեք-
սի խորացմանն ու յուրացմանը:

4. Սակայն բավական չե ամբողջ տարվա
պլանն ունենալ: Պետք ե տարեկան պլանը հա-
մաշափ և նպատակահարմար — մեթոդապես—
բաշխել ըստ կոմպլեքսային թեմաների և լեն-
թաթեմաների. այսինքն՝ կազմել ամբողջ տարե-
կան աշխատանքների որացուցալին պլան:

5. Որացուցալին պլանն ել իր հերթին — պա-
րապմունք առ պարապմունք — պետք ե մանրա-
մանել: Ուսուցիչը նախքան դասարան մտնելը
պետք ե այդ որվա դասը մեթոդապես մշակած
լինի, ունենա այդ ժամկանք պարապմունքի պլանը:

6. Պլանավորման այս ամբողջ աշխատանքի
ժամանակ, սակայն, ուսուցիչը չպիտի բավակա-
նանա ծրագրով և դասագրքով, վորովինետե
նախ՝ նրանք, — մանավանդ ծրագիրը, վոր մոտ
լերեք տարի առաջ ե կազմվել, — բավական հնա-
ցած են՝ այն լերնույթի հետևանքով, վոր մեզ
մոտ կյանքն ավելի արագ տեմպով ե զարգա-
նում և փոփոխվում, քան վոր գրքերը կարենա-
լին այդ կանխատեսել և լետեկիցը հասնել.
յերկրորդ՝ դասագիրքը միայն հայերենի համար
ե, ուստի բարտեզով, գրքով և լրագրով աշխա-
տելու գիտելիքներն ու վարժույթները, ինչպես

և մաթեմատիկական իմացություններն ու թվական տվյալները պետք ե այլ աղբյուրներից քաղել։ Այդպիսի աղբյուրներ են՝ աշխարհագրության և մաթեմատիկայի դասագրքերը, վորոնք իրենց մեջ պարունակում են ծրագրով պահանջված գիտելիքներն ու վարժույթները (որինակ Մ. Գևառարյանի «Մաթեմատիկայի աշխատանքի գիրք»-ը, Արքահամբանի և Հասրաթյանի «Աշխարհագրության ձեռնարկ»-ը և այլն):

7. Մակայն կողմնակի դասագրքերից և ձեռնարկներից ավելի կարևոր ե ընթացիկ գրականությունը, — ուր արտացոլված են քաղաքական, տնտեսական-շինարարական, կուլտուր-հասարակական հրատապ խնդիրները, — և մանավանդ ուրաթերթերն ու մյուս պարբերագրերը, վորոնց մեջ ավելի մարտական և ալժմեցական հարցեր են արծարծված։ Այդ նպատակի համար հանձնարարելի յեն՝ «Սոց. արշավ» (մանավանդ քաղաքատիպ և արդյունաբերական վայրերի համար), «Մաճկալ» (գլուղատիպ վայրերի համար), «Ավանգարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Խորհրդակին Հայաստան» և այլ թերթերը։ Ուսուցիչը պետք ե ընթացիկ գրականության և մամուլին ուշի-ուշով հետեւի և այնտեղից վերցնի սովորողներին մատչելի հոդվածներ, թարմ թվական տվյալներ ու այլ նյութեր, վորոնք

բավարար չափով չկան կամ բոլորովին բացակայում են, ինչպես հայերենի դասագրքում, այնպես և ուրիշ ոժանդակ ձեռնարկներում. այդ բոլորը նա պետք է կանխավ մշակի, ներձուվի ծրագրի հետ և մտցնի իր աշխատանքների պլանի մեջ՝ այնպես, վոր տարեկան ծրագիր-մինիմումը չտուժի:

8. Ուսուցիչը պետք է հետեւի տեսական և հարվածային կամպանիաներին և ամբողջ դպրոցի հետ իր գործոն մասնակցությունը ցուցաբերի այդ կամպանիաներին։ Ներկայումս, սոցիալիստական արշավի այս շրջանում, յերբ տեսդու յեռանդով ամբողջ խորհրդացին հասարակայնությունը գործի յե լծվել, հասակավորների հանրակրթական և գրադիտական դպրոցներն ել պիտի իրենց աշխատանքների մեջ խոշոր բեկում կատարեն՝ այդ արշավին մասնակցելու ուղղությամբ։ Գլուղի սոցիալիստական վերակառուցման և գրահետ կապված համատարած կոլտնտշարժման ու գարնանացանի խնդիրները, ինչպես և առհասարակ հնգամյա պլանը՝ կենսական պահանջներ են առաջադրում նաև հասակավորների հանրակրթական և գրադիտական դպրոցներին, վորտեղ ընդգրկված են քաղաքի և գյուղի աշխատավորական համեմատարար ավելի հետամնաց խավերը, վորոնք, հենց այդ հե-

տամացության պատճառով, ավելի կարիք ունեն սոցիալիստական վերակառուցման խնդիրներն ուսումնասիրելու, վորպեսզի նրանք ելքաշվեն սոցիալիստական շինարարության լեռուղեռի շրջապտուտի մեջ։ Այս ի նկատի ունենալով և, վոր Քաղղուսկիշվարչությունը հրատարակության և տվել «Գարնանացանի կամպանիան» և հասակավորների գրագիտական ու հանրակրթական դպրոցները», «Հնգամյակը և կոլխոզարժումը» (ծրագիր-հրահանգ), «Գարնանացանը և խրճիթ-ընթերցարանը» և այլն, վորոնք լինելու լեն նաև հիմնական լրացուցիչ ծրագիր-ձեռնարկը մեծահասակների դպրոցների համար։ Այդ պատճառով ուսուցիչը լուր աշխատանքների պլանը կազմելիս պիտի դրանք ի նկատի ունենա իբրև լրացուցիչ ձեռնարկներ և, այդ հարցերին բավականաչափ ժամեր հատկացնելով, մտցնի իր պլանի մեջ։

9. Պլանավորման և մեթոդապես մշակված ծրագիրներ կազմելու աշխատանքներն անշուշտ շատ դժվարին և պատասխանառու լեն և վերեն անհատ-ուսուցչի ուժերից։ Այդ պատճառով անհրաժեշտ ե, վոր այդ աշխատանքները կատարվեն կոլեկտիվ ուժերով՝ սեկցիոն պարապմունքների ընթացքում, մանկխորհուրդներում և այլն։ Ցանկալի լե, վոր այդ աշխատանքների

արդյունքներն ուղարկվեն Քաղլուսկաբինետին,
վորպեսզի նոր ծրագրեր մշակելիս նա կարողա-
նա հիմնվել նաև մասսայական փորձի ու դիտո-
ղությունների վրա. այդ դեպքում միայն ծրա-
գրերը կարող են կենդանի և կենսունակ լինել:

10. Այս պլանավորման աշխատանքները կա-
տարելուց հետո ուսուցիչը պետք է լեզվական
վարժությունների (հանչ) ամբողջ ծավալը վորոշի
(հիմնվելով ծրագրի վրա) և տեսնի, թե դրանց
վեր մասը վեր հոդվածի հետ և հարմար կապել:

Նա պետք է վարժություն ուսումնասիրի հոդ-
վածի տեսակետից, հոդվածը՝ վարժութի տեսա-
կետից: Այսինքն՝ գտնի, դուքս բերի հոդվածից
այն, ինչ վոր վարժութի մշակման, յուրացման
և խորացման նպաստում ե. և հատկապես այն
վարժությունները կապի այս կամ այն հոդվածի
հետ, վորոնց համար տվյալ հոդվածում բավա-
կանաչափ որինակներ կան:

11. Վարժություններն, իբրև կանոն, պիտի ան-
հրաժեշտորեն բղխեն և դուքս բերվեն հոդված-
ներից և վոչ թե նրանցից անկախ լինեն կամ
միայն ձևականորեն, արտաքնապես կատված
լինեն հոդվածների հետ: Սովորողները — դասա-
տուի գլխի զցող հարցերի ոժանդակությամբ —
ինքնուրույն կերպով պիտի դիտեն հոդվածի մեջ
տիրապետող այսինչ կամ այնինչ լեզվական լե-

բեռւլթը, ընդհանրացումներ կատարեն և «կանոններ» դուրս բերեն։ Այդ կանոնները, դասատուի ոգնությամբ, ճշգրիտ ձևաբանվելուց հետո՝ պետք ե համակարգ հաջորդականությամբ գրի առնվեն տետրակներում միքանի բնորոշ որինակների հետ միասին։ Այդ որինակները, ինչպես ասացինք, պիտի դուրս բերվեն այս կամ այն հողվածից և լրացվեն ուսանողների կողմից ինքնուրույն ձեվով կազմած այլ որինակներով։

12. Ուսանողների ինքնուրույնությունը չի նշանակում, վոր դասատուի անելիքները պակասուն են։ Ընդհակառակն։ Դասատուն վոչ միայն պիտի դասարան մտնելուց առաջ մեթոդապես մշակի հողվածը, դուրս բերի կանոնները և այլն։ Նա պետք է կանխատեսի՝ գեթ ընդհանուր գծերով, թե նույն աշխատանքը դասարանում—արդեն սովորողների կողմից կատարվող—ինչ ընթացք ե բռնելու, վորպեսզի նա առաջուց պատրաստվի այդ ընթացքին ուղղություն տալու։ Յեվ յերբ նա մտնում է դասարան, պիտի կարողանա այնպիսի տակտով վարել գործը, վոր իր միջամտությունը բոլորովին աննկատ մնալով հանդերձ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքների թե՛ ընթացքը յեվ թե՛ արդյունեն այն լինի, ինչ նա կանխատեսել եր։

13. Ծրագրալին նյութի բաշխման ժամանակ խստությամբ պիտի հետևել ուսուցման ՏԵՄՊԻՆ, վորպեսզի չլինի թե նյութի շատության և խճողման հետևանքով ուսուցումը «սրընթաց անցնի առանց հետք թողնելու», ինչպես հաճախ դանդատվում են ուսանողները՝ մանավանդ բանվոր ուսանողները, վորոնք մեր հետաքրքրության առանցքը պիտի կազմելին։ Ուստի աշխատանքի պլան կազմելիս պետք ե բռնել ծրագրի խիստ պարզեցման ուղին՝ հիմք վերցնելով անհրաժեշտ մինիմումը (գիտելիքների և վարժուցիքների) և նպաստավոր պայմաններում միայն այն խորացնելով և ընդլայնելով։ Ուսանողը պիտի լավ յուրացնի սովորելիքը և կարենա այն գործադրել իրական կյանքում։

14. Յեթե ծրագրի նույնիսկ անհրաժեշտ մինիմումն անցնելու համար կարիք լինի աշխատանքների մի մասը դասաժամերից դուրս փռխաղել, ապա այդպիսի դեպքերում, նախ՝ տանը կարելի յե միայն այնպիսի աշխատանքներ ու առաջադրություններ տալ, վոր սովորողները միայն դասարանում սովորածի հիման վրա կարող են կատարել՝ առանց ավելորդ շեղումների և խարխափումների։ Յերկրորդ՝ տան աշխատանքներն այնքան շատ չպիտի լինեն, վոր ուսանողը չկարողանա կատարել, կամ կատարելիս

ել նրա մյուս՝ նույնչափ կարեոր գործերը կամ
նրա առողջությունը տուժի:

15. Յեթե ուսանողների միջև գրագիտության
մակարդակի խիստ մեծ տարբերություն կա, ա-
պա նրանց խմբերի բաժանելիս պետք ե հիմք
վերցնել մայրենի լեզուն, վորովհետեւ քարտեզով
աշխատելը, հաշիվը և այլն ավելի՝ գետելիքներ
և մտածական իմացություններ են, քան վար-
ժութներ (հայու). իսկ իմացությունն և գիտե-
լիք ավելի կարճ ժամանակում ե հնարավոր
ձեռք բերել. մինչդեռ վարժութը, — իսկ լեզուն
վարժութ ե, — շատ ավելի յէ ժամանակ պահան-
ջում. ուրեմն և ավելի կարճ՝ ժամանակ ե պետք՝
ուսանողների իմացությունն ու գիտելիքները
մի մակարդակի բերելու, քան նրանց գրագի-
տության աստիճանը:

Յեթե դպրոցում մի խմբից ավելի չկա, այդ
դեպքում պետք ե դիմել այլ միջոցների ոգնու-
թյան — ինչպես՝ հատուկ տնալին աշխատանքներ,
կոնսուլտացիա, ժամանակին կատարած հաշ-
վառք, արձակուրդային առաջադրություններ,
ուժեղների ամրացում թույլերին, խմբակ-բջիջ-
ների կազմակերպում և այլն:

16. Յեթե մենք վերեռում (կետ 11) ասացինք,
թե լեզվական վարժութները պիտի կապված
լինեն հոդվածների հետ և բղխեն սրանցից, դա

չի նշանակում, թե վարժույթների սերողական
կարգը պիտի մեքենաբար ստորադասել հոդված-
ների պատահական հաջորդականության։ Ընդ-
հակառակն՝ նոդվածների ընթրությունը պիտի
կատարվի ըստ վարժույթների մեթոդական կար-
գի և, յեթե հոդվածների մեջ վարժույթները
հիմնավորող բավարար չափով որինակներ չկան,
ինքնուրուն կերպով կազմված նոր (հոդվածից
դուրս, բայց բովանդակալից) որինակներով լրաց-
վի հոդվածների վարժութային թերին։

17. Լեզվական վարժույթների կարգը սահմա-
նելիս պետք ե զեկավարվել այն հիմնական
սկզբունքով, վոր լեզվի մեջ մասը նեանակու-
րյուն յեվ իմաստ ե ստանում ամբողջի մեջ, ո-
րինակ՝ պարբերությունը հոդվածի մեջ, խոսքը՝
պարբերության մեջ, ասույթը՝ խոսքի մեջ,
բառն՝ ասույթի մեջ և հնչունը՝ վանկի մեջ։

Այս հիմնական սկզբունքից բղխում ե, վոր
վոչ թե մասերից պետք ե սկսել և այնուհետեւ
հաջորդական կցորդումով հասնել ամբողջին (հա-
մադրական կամ սինթետիկ առաջընթացություն),
այլ նախ պետք ե տալ ամբողջը (լինի ալդ ամ-
բողջը մի հոդված, մի լոգունգ, մի հատված,
մի խոսք), ապա ալդ ամբողջը վերլուծել իր
բաղադրիչ մասերի, պարզել ալդ մասերի փո-
խադարձ կապն ու դերն ամբողջի մեջ և, ի վեր-

ջո, վերընդգրկել ալդ վերլուծված մասերն ամբողջի մեջ։ Որինակ. — նախ՝ պետք եւ տալ հողվածի ամբողջական տպափորությունը՝ վառկենդանի և անմիջորեն։ Ապա՝ հողվածը բաժանել գլխափոր մասերի, ինչ չափով փոր ալդ մասերը հայտաբերում են ամբողջի հիմնական կողմերը։ Այդ գլխափոր մասերի մեջ ընդգծել, պարզել յենթամասերը. և ալսպես շարունակ մինչև վերջին բաղադրիչ տարրերը։ Այնուհետեւ այդ տարրաբաշխված մասերից պետք եւ վերակառուցել ամբողջը։

Մեթոդական շարժման այս յերեք մոմենտները (ամբողջի տալը, այն վերլուծելը, այն վերակառուցելը) սերտորեն կապված են իրար հետ. — վերակառուցված ամբողջականն ըստ ելության նույն տրված ամբողջականն ե՝ ճոխացված վերլուծության միջոցներով. տպափորությունը (տրվածը) դառնում ե (վերլուծությամբ) գիտակցություն (վերակառուցվածը)¹.

Այս ղեկավար սկզբունքը կիրառելով վարժությների նկատմամբ՝ կստանանք լեզվական վարժությների մոտավորապես հետևյալ հաջորդական համակարգությունը.

¹ Այս խնդրի մասին տես՝ «Լեզվի ամբողջականությունը մանկավարժական տեսակետից», «Ժողովրդական լուսավորություն» 1928 թ. № 4, եջ 384։

- Գրքի բովանդակությունը և անունը:
- Բաժինների և լենթաբաժինների բովանդակությունը և վերնագիրը:
- Հոդվածի հիմնական առանցքը և կապը վերնագրի հետ:
- Հոդվածի հիմնական մասերն ու լենթամասերը, նրանց փոխադարձ կապը և տեղն ու դերն ամբողջության մեջ. դրանց վերնագրությունները:
- Ամբողջական խոսք և վերջակետ:
- Խոսքի մասերը՝ ասուլյթներ և ասուլյթների մասերը՝ բառեր: Ստորակետ:
- Գրավոր և բանավոր խոսք: Զայնի լելիեջը կարդալիս և կետադրություն:
- Բառերի արտասանությունն ու դրությունը. ուղղագրական դիտողություններ ու կանոններ: Հնչյունաբանություն, բառակազմություն, ձևաբանություն (հոլովում և խոնարհումը վորպես ածանցման ձևեր՝ առանց լրիվ համակարգման և տերմինոլոգիայի):

Առաջին չորս վարժույթներն ընդունված ե ամփոփել «Աշխատանք գրքով և լրագրով» անվան տակ: Վերջին չորսն արդեն լեզվական վարժույթնեն նեղ մտքով, վորի մեջ մտնում են՝ կարդալը, գրելը և գրավոր ու բանավոր խոսքի դարգացումը:

Այժմ, դարձյալ համառոտ՝ թեզիսների ձևով, խոսենք այդ վարժույթների մասին առանձին-առանձին:

19. Պարապմունքների կարգը և տեսողությունը.

ա) Ներածական զրուց (թեման բացատրող)

10—15 րոպե.

բ) Ընթերցանություն, վերլուծում, աշխատանք գրքով և լրագրով 40 րոպե »

դ) Գրավոր աշխատանքներ (լեզվից) 30 »

դ) Հաշիվ 35 »

ե) Աշխատանք քարտեզով 5—10 »

Մի որվա պարապմունքների տեսողությունը
ընդամենը՝ 120—130 րոպե:

19. Ինչպես այս տախտակից լերենում ե' պարապմունքների մեծ մասը (80—85 րոպե. ա, բ և գ կետերը) հատկացված ե լեզվին, վորկոմպլեքսի գլխավոր առանցքն ե կազմում։ Սակայն «լեզուն» նեղ մտքով չպիտի հասկանալ։ Այստեղ մտնում են ներածական զրուցները (վորոնք մեծ մասամբ հասարակագիտական բնույթունեն, վորովհետև վերաբերում են հոդվածների կենցաղային, արտադրական և այլ հասակագիտական կողմերի վերլուծությանը), գիրք և լրագիր գործածելու վարժույթները, լեզվական դիտողությունները, գրավոր բազմապիսի աշխատանքներ և այլն։ Այս մտքով վերցրած՝ «լեզվին» պարապմունքների տեսողության $\frac{2}{3}$ -ը հատկացնելը շատ չե։

Այս տախտակը բարացած և անփոփոխ մի բան

չեւ Հաճախ կարիք եւ լինում ներածական զրուցին նշանակվածից ավելի ժամանակ հատկացնել, բանավորին՝ ավելի քիչ, գրավորին՝ նույնութեա և այն։ Այս փոփոխությունը կախված ե մի կողմից անցնելիք նյութի բնույթից, մյուս կողմից այն հանդամանքից, թե ուսանողության տվյալ կազմը վեր վարժույթից (լեզվական, մաթեմատիկական և այն) ավելի կարիք ունի լրացումների և խորացման։

II. ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ


Ա. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ

1. Հանրակրթաբանի ուսուցիչը հասակավոր սովորողին հենց դպրոցում պիտի տա գրքով աշխատելու ունակությունը, վորպեսզի ընթացավարտը կարողանա կյանքում իր պետքերի համար գիտական, քաղաքական և գեղարվեստական գրականությունից ինքնուրույն կերպով ոգտվ լ։ Այդ նպատակի համար հայերենի դասագիրքը պիտի ծառայի վորպես միջոց-ուղեցույց, վոր առաջնորդելու յեւ ուսանողին դեպի ինքնուրույն ընթերցանությունը։ Հենց դասագրքի վրա հասակավորը պետք եւ սովորի, թե ինչ պիտի կարդա, ինչպես կարդա, ինչու կարդա և ինչպես կարդացածն իրագործի իր կյանքում և իր հասարակականորեն-ոգտավետ աշխատանքներում։

2. Գրքով աշխատելու առաջին և կարևոր խընդիրն եւ գրքի ընթրությունը. Ուսուցիչը հենց «Դեպի նոր կյանք» կամ «Խորհրդային գյուղ» դասագրքերի որինակի վրա պիտի պարզի--ուսանողների գործոն մասնակցությամբ, — վոր գրքի ընթրությունը պայմանագրված ե նպատակով: Նպատակը պարզելիս ուսանողներն անհրաժեշտաբար պիտի ծանոթանան, իհարկե, ծրագրին, վորտեղ նպատակն ավելի մանրամասն ե շարադրված: Ուսանողը հիմնական ուրվագծերով պիտի իմանա, թե ինչ ե առաջադրված այս տարի անել մայրենի լեզվի ասպարիզում, ինչ նպատակ ունի լեզվի ուսուցումը և այլն: Բնականաբար հարց կծագի, թե ինչու ծրագրի առաջադրանքն իրագործելու գլխավոր և յավագույն ոժանդակը հատկապես այդ դասագրքերն են, ինչու քաղաքի համար նպատակահարմարը «Դեպի նոր կյանքն» ե, գյուղի համար՝ «Խորհ. գյուղը»: Հարց կծագի նաև մաշչելիության մասին, թե ինչունույն ծրագրային բովանդակությունն ունեցող մի ուրիշ - ավելի դժվար - գիրք նպատակահարմար չե վերցնել և այլն:

Այս խոսակցությունից ուսուցիչն ուսանողների գործոն մասնակցությամբ լեզրափակում ե, վոր գիրք ընտրելիս պետք ե՝

ա) Առաջուց պարզ պատկերացնել, թե ինչ



նպատակի համար ե այս կամ այն գիրքը կարդացվելու:

բ) Գիրքն իր բովանդակութիւնը համապատասխանում ե այդ նպատակին:

գ) Մատչելի՞ յե գիրքն ընթերցողին:

Ուսուցիչը պիտի հետևի, վոր ուսանողն ինքնուրույն կերպով գիրք ընտրել սովորի, Այդ նպատակի համար նա ուսանողներին կարդալ ե տալիս վորևե գրքի դժվար հատվածներից, ստուգելու համար, թե նրանք կարող են գիրքը հասկանալ: Զանազան հոդվածներում արծարծված հարցերի առթիվ առաջարկում ե լրացուցիչ գըրքերի ցանկ և հարց տալիս, թե վոր գիրքը վոր հարցին ե նվիրված (հիմնվելով գրքի անվան և բովանդակութիւն վրա):

Յեթե ուսանողը չի կարող ինքնուրույնաբար գրքի ընտրութիւնն կատարել, պիտի դիմի ավելի ձեռնհամների (ուսուցչի, գրադարանապետի, ակումբի կամ խճիթ-ընթերցարանի վարչի և. այլն) խորհրդին:

3. Գրքի ընտրութիւնն հետ սերտորեն կապված ե գրքի բովանդակության ծանոթանալը նյութերի ցանկի միջոցով: Այստեղ ել դասագիրքը շատ նպատակահարմար միջոց ե հանդիսանում: Ուսուցիչը դասագրքի ցանկի միջոցով ուսանողներին ծանոթացնում ե գրքի բաժիններին, այդ

բաժինների տակ ամփոփված հոդվածներին. ցուց
ե տալիս հոդվածի և բաժնի վերնագրերի կապը
մի կողմից, բաժինների վերնագրերի և գրքի ան-
վան կապը՝ մյուս կողմից։ Առաջարկում ե ու-
սանողներին գտնել այսինչ հոդվածը, տալ հեղի-
նակի անունը, նշել ծավալը և այլն։ Նույն աշ-
խատանքը կատարել ե տալիս նաև ուրիշ գը-
քերի նկատմամբ։

4. Այս աշխատանքի հետ պիտի կապել ծանո-
թությունը՝ գրքի անվանը, հեղինակին, տպա-
գրության տեղին և ժամանակին, հրատարակչու-
թյանը, ծավալին (եջերի քանակը), գնին և այլ
տեխնիքական հանգամանքներին (վորտեղից, ինչ
ձեռնարկությունից կամ հիմնարկից կարող ե ու-
սանողը գիրք գրել-ստանալ և այլն)։ Այս վար-
ժություններն ել նախ պիտի կատարել դասա-
գրքի վրա, այնուհետև, իրեն առաջադրություն,
տալ ուրիշ գրքեր։

5. Այս նախապատրաստական աշխատանքնե-
րից հետո գալիս ե գրքի ընթերցանությունը։
Դարձյալ դասագրքի որինակի վրա կարելի յե-
ցուց տալ, թե հաճախ գրքեր են լինում (քրես-
տոմատիաներ, հավաքածուներ, տեղեկատուներ
և այլն), վորոնց բոլոր գլուխները, կամ բոլոր
բաժինները, կամ բոլոր հոդվածներն անհրաժեշտ
չե կարդալ և վոր յերբեմն մի գրքից միայն մի քա-

նի հատվածներ կամ գլուխներ ե հարկավոր կարդալ և կամ, վերջապես գրքեր կան, վոր ամբողջությամբ պիտի կարդացվեն։ Ուրեմն նախ պետք ե վորոշել, թե ավալ գիրքն իր ամբողջությամբ պիտի կարդալ, թե նրա միայն մի մասը, այն ել՝ վեր մասը։ Այս բանը վորոշելու համար ինկատի պիտի ունենալ, թե կարդացողը ինչ հարցապահանջով ե մոտենում գրքին, ինչ նպատակի համար ե այն կարդում. այնուհետեւ նյութերի ցանկի ոգնությամբնշել այն հատվածները կամ գլուխները, վոր պիտի կարդալ։ Յերբ դասատուն այսինչ կամ այսինչ հոդվածը լրացնելու կամ խորացնելու նպատակով ուսանողին այս կամ այն գիրքը կամ գրքի այս կամ այն հատվածն ե հանձնարարում կարդալու, ապա դա լավ առիթ ե, վոր ուսանողը տեղնուտեղը հասկանա, թե ուսուցիչն ինչով ե այդ դեպքում դեկավարվում, վորպեսզի այդ նույն աշխատանքը հետադարձում ինքը, բոլորովին ինքնուրույն կերպով, կարողանա կատարել։

6. Ինչ վերաբերում ե գրքի ընթերցանությանը բուն պրոցեսին, ապա ուսուցիչը լուրաքանչուր հոդված (դասագրքից) անցնելիս՝ միշտ պետք ե աշքի առաջ ունենա, վոր ուսանողը նույն բանը (հոդվածի վերնագիրն ու առանցքը և դրանց կապը). հոդվածի գաղափարախոսական և գրական

տարրական վերլուծությունը. հոդվածը գլխավոր մասերի և լենթամասերի բաժանելը և վերնադրելը. հոդվածի պլանը, կոնսպեկտը կազմելը. հոդվածից քաղվածներ և ցիտատներ հանելը. ընդունակություններ և լուսանցքային դիտողություններ անելը (այլն) վարժվի նաև ինքնուրույն կերպով՝ առանց ուսուցչի ոգնության անել։ Այդ նպատակին հասնելու համար դասատուն հետըգհետե հոդվածի մշակության աշխատանքների մեջ իր ունեցած մասնակցությունը պիտի նվազեցնի, մինչև վոր ուսանողներն այն աստիճանի հասնեն, վոր արդեն առանց ուսուցչի ոգնության հոդվածները մշակեն։ Բացի այդ դեռ սկզբներում ուսուցիչը կարող է հեշտ հոդվածները թողնել ուսանողներին մշակելու կամ պարզ և մատչելի դրական հանձնարարել ուսանողներին, վոր մշակեն և զեկուցեն այդ մասին դասարանում։ Այդ զեկուցումները պիտի տևեն 15–20 րոպե, կարճ տեղեկացնեն, թե ինչ ե կարդացված (հոդվածի կամ գրքի անունը, հեղինակը, տպագրության տեղն ու ժամանակը), ինչ ե բովանդակությունը, ինչն ե հավանել—ինչը վոչ, ինչու, արժեկարդալ, թե վոչ։

Դասատուն վոչ թե անցնում ե միայն հայերենի դասագիրքը, այլ աշխատում ե կազմակերպել ուսանողության ամբողջ ընթերցանության գործը։

Բ. ԱՇԽԱՏԱՆՔ ՀՐԱԳՐՈՎ

1. Այժմ մեր սոցիալական կյանքի տեսման ավելի արագ ե, քան վոր մենք կարենալինք դրականությամբ նրա լետևից հասնել։ Այդ տեսակետից լրագիրը, գրքերի և դասագրքերի համեմատությամբ, ավելի բարենպաստ պայմաններում ե գտնվում, վորովհետեւ լրագիրն ավելի լե ի վիճակի կյանքի հետ համընթաց քալել, մինչդեռ մյուս տիպի դրականությունը յետ ե մնում կյանքից։ Դրանից բղխում ե, վոր լրագրի ընթերցումը շատ կարեոր ե՝ վոչ միայն գրքերում յեղածը կոնկրետացնելու, լրացնելու և խորացնելու նպատակով, այլ նաև սոցիալիստական շինարարության յեռուզեռին հետևելու և նրան ակտիվ մասնակցություն ունենալու նպատակով։ Ահա թե ինչո՞ւ պետք ե հանրակրթարանները հատուկ ուշադրություն դարձնեն լրագրով աշխատելու վարժություններին։

2. Լրագրի ընտրությունը կատարելիս պիտի ինկատի ունենալ սովորողների կազմը. — բանվորների համար նպատակահարմար ե ընտրել «Սոցիալիստական արշավը», կանանց համար՝ «Հայաստանի աշխատավորուհին», գլուղացիների համար՝ «Մաճկալը» և «Կոլխոզնիկը», բատրակների համար՝ «Բատրակը» և այլն։

3. Արագիրն ընտրելուց հետո պիտի սովորողներին ծանոթացնել լրագրի բաժիններին, վորոնք են՝ առաջնորդող, գլխավոր հոգվածներ և թերթոն (ֆելլետոն), թղթակցություններ և լուրեր։

Պետք ե ուսանողներին վարժեցնել «Այսուլա համարում»-ի միջոցով գաղափար կազմել թերթի բովանդակության մասին։

4. Ուսանողներին պիտի վարժեցնել թերթից կտրումների միջոցով—ալբոմ կազմել, վորի մեջ նյութերը դասավորված լինեն ըստ բովանդակության և հաջորդականությամբ (որինակ՝ «Գարնանացանի կամպանիան» վերնագրի տակ դասավորել այդ կամպանիային վերաբերվող նյութերը հաջորդաբար, «Կոլխոզշարժում» բաժնի տակ՝ այդ բաժնին վերաբերյալ նյութերը և այլն)։

5. Մնացած բոլորը, ինչ ասված ե գրքով աշխատելու մասին, վերաբերում ե նաև լրագրով աշխատելուն, ուստի ավելորդ և կրկնել։ Միայն պետք ե ասել, վոր դասատուն յերբեմն առաջադրություն պիտի տա, վոր ուսանողը, թերթի նյութերի վրա հիմնված, զեկուցումներ տա հետեւյալ և նման թեմաների մասին. «Գարնանացանի արդի վիճակը», «Համատարածը վերջին շաբաթում» և այլն։

Դ. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱ-
ՑՈՒՄ

1. Հասակավոր կիսագրագետին գրական բար-
քառով խոսելուն խանգարում են՝ ա) բառապա-
շարի աղքատությունը, բ) կանոնավոր խոսքեր
կազմել չկարողանալը, գ) բանավոր և գրավոր
արտահայտվելու անվարժությունը, դ) ընդհա-
նուր զարգացման մակարդակի ցած լինելը։ Ա-
ռաջին լեռեքը դիմավորապես մայրենի լեզվի
գործն են, իսկ վերջինը՝ մյուս առարկաների
(հասարակագիտություն, մաթեմատիկա, բնագի-
տություն և այլն)։ Այստեղ մենք կխոսենք մի-
այն խնդրի այն կողմի մասին, վոր վերաբերում
ե մայրենի լեզվին։

Բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը մե-
ծապես նպաստում են այն վարժութները,
վոր կապված են գրքով և լրագրով կատարելիք
աշխատանքների հետ և վորոնց մասին այստեղ
ավելորդ ե կրկնել։ Այստեղ կավելացնենք մի
քանի հիմնական դիտողություններ, վորոնք նեղ
մտքով հատկապես խոսի զարգացմանն են վե-
րաբերում։

2. Բառապաշարը կարելի յե հարստացնել բա-
ռաւարան կազմելու միջոցով։ Բառարան կազմե-
լու ձեն սկզբում ուսուցիչը ցուց ե տալիս, այ-

նուհետև միայն հետեւում եւ և յերբեմն ստուգում:

3. Բառապաշարը դասավորելու և բառիմաստները ճշտորոշելու համար պետք եւ ուսանողներին դադախար տալ համանիշ (դարմանալ—հիանալ—սքացչանալ, բարկութիւնն—զայրույթ—ցասում և այլն), նույնանիշ (այտ—թուշ, ատամ—ակուա) և համանուն (իր=առարկա, իր=լուր, այր=քարայր, այր=տղամարդ և այլն):

4. Բառապաշարի հարստացման հետ զուգընթաց պիտի վարժեցնել խոսքեր նիւթ կազմելուն: Անկետա լցնելիս, կարդացած հոդվածների հարցերին պատասխանելիս և այլն պետք եւ ուսուցչի զեկավարությամբ կոլեկտիվ կերպով կազմել կուռ ու կոփ խոսքեր և գրել տետրերում:

5. Խոսք կազմելուն նպաստում եւ նաև ընդարձակ խոսքերը սեղմելը և սեղմ խոսքերն ընդարձակելը: Որինակ՝ «մեր կոռպերատիվի վարչության առաջին նիստը բացվեց» խոսքի գլխավոր անդամներն են՝ «նիստը բացվեց». մլուս բառերը, անհրաժեշտության կարգով, կարելի յեւ մեկամեեկ կրճատել: Կամ՝ «զարթնելիս լսեցի» խոսքը կտրելի յեւ ընդարձակել՝ «յերբ յես զարթնեցի, լսեցի» և այլն:

6. Կարելի յեւ վորոշ բառեր տալ և առաջադրել՝ դրանցից խոսքեր կազմել: Որինակ՝ «ան-

դրագետ», «քաղաքականություն», «դուրս» բառերից ստացվում եւ «անդրագետը քաղաքականությունից դուրս ե» խոսքը:

7. Պիտի հատուկ կովել ավելորդ բառերի դեմ, վորոնք խոսքի մտքին մի նոր կարևոր բան չեն ավելացնում:

8. Պիտի կովել նաև անիմաստ տեղն ասված բառերի գործածության դեմ, ինչպես՝ «ուրեմն», «այսպես կոչված» և այլն, վոր կատարվում եւ մանավանդ բանավոր արտահայտվելիս:

9. Հատուկ ուշադրություն պիտի դարձնել գունդկաբանությունը և ոտարաբանությունը վերացնելու վրա:

10. Վոճի ճապաղության դեմ կովելուն նպաստում եւ հողվածի մասերին և լենթամասերին ամբողջական խոսքերով (և վոչ թե անդեմ խոսքերով կամ, նույնիսկ, առանձին բառերով) վերնագրումներ տալը. ինչպես և տվյալ թեմայի մասին հեռագիր կազմելը:

11. Ինչ վերաբերում եւ ամբողջական շարադրությանը (գրավոր կամ բանավոր), ապա պետք եւ ասել, վոր բանալոր վերապատմումը, վոր մեր բոլոր տիպի դպրոցներում շատ գործածական եւ, մանավանդ սկզբնական շրջաններում, իերը հասակավոր կիսագրագետը դեռ չի կարողանում մշանոնավոր և մաքուր գրական բարբառով խոս-

քեր կազմել, — առանձին ոգուտ չունի, վորովհետի բանավոր արտահայտվելն այնպես արագ եկատարվում, վոր մարդ հնարավորություն չունի վոչ միայն ամբողջ ասելիքը կապակցված և տրամաբանորեն դասավորելու, այլ, նույնիսկ, առանձին խոսքերը մշակելու մասին մտածել։ Այդ պատճառով ամբողջական շարադրությունները պետք ե սկսել գրավոր յեվ միայն հետզիետե անցնել բանալորին։

12. Գրավոր շարադրության պարզ ձեր կոլեկտիվ կերպով կազմվող պատմվածքն է։ Ուսուցչի ղեկավարությամբ վերցվում ե մի հեշտ թեմա։ Զրուցում են այդ թեմայի մասին։ Զրուցակցությունից հանվում ե այդ թեմայի մասին արտահայտված այսինչ կամ այնինչ կետը, սեղմ ձեւաբանում են և ապա գրում գրատախտակի վրա։ Այնուհետև քննում, ձեւաբանում և գրում են յերկրորդ կետը, ապա յերրորդը, չորրորդը և այն, մինչև վոր թեմայի հիմնական կետերն սպառում են։ Վերջը այդ կետերը դասավորում են և կապակցում — և ստացվում ե մի փոքրիկ շարադրություն, վորը սովորողներն արտադրում են գրատախտակից իրենց տետրերում։

Այս գեղքում մեծ նշանակություն ե ստանում շարադրության պլանը, վոր մեծապես նպաստում ե սեղմ և առանց շեղումների արտահայտվելուն։

13. Վոճի և լեզվի մշակմանը մեծ չափով նպաստում և վոտանավորն արձակի վերածելը և գավառաբարբառից գրականի թարգմանելը, վորհաճախ պիտի կատարվի մեր դպրոցներում, վորովհետև վոտանավորներն ընդհանրապես տեխնիկական ձեմի հետևանքով, շատ սեղմ, կուռ. ու համաշափի են՝ թե առանձին խոսքերի և թե ամբողջ շարադրանքի կառուցման տեսակետից. իսկ գավառաբարբառի մեջ հայկական լեզվական մտածողությունն ավելի ճիշտ ե՝ միայն գռեհիկ և ոտար բառերով խճողված, վորը կվերանա թարգմանության ժամանակ.

14. Գործնական գրությունները (գիմում, լիազորագիր, ստացական, արձանագրություն և այլն) վոչ միայն նեղ-գործնական մտքով պիտի ոգտագործել, այսինքն՝ վոր ուսանողներն այն իրեն նմուշ-ձև արտագրեն և հարկ յեղած դեպքում նման գրություն իրենք գրեն՝ միայն շարլոնի մեջ անունները թիվը, տեղը և այլն փոխելով: Վոչ. ալդ բիչ ե: Այդ գրությունները պիտի ոգտագործել նաև վոճաբանական-լեզվական վերլուծության համար և ցուց տալ, թե արտահայտվելիս (բանավոր կամ գրավոր) վորոշ նպատակի ծառալող անհրաժեշտ բառերն ու խոսքերը միայն պիտի թողնել, մյուսներն անխնա կրնատելով ու դուրս թողնելով:

15. Խոսքի զարգացմանը (մանավանդ շարադրանքին) նպաստում ե նաև ՏԱՐՐԱԼՅԱՆ գրախոռական կազմելը: Վերցվում ե մի հեշտ դըքույկ կամ հոդված և, ուսուցչի ողնությամբ ուղեկավարությամբ, հակիրճ տրվում ե ՆՐԱ հիմնական բովանդակությունը և արվում նն քննադատական դիտողություններ: Սկզբում բանավոր կատարված այդ նույն աշխատանքի արդյունքները բանաձևվում են, վորոշ պլանով դասավորվում և գրվում տետրերում:

16. Խոսքի զարգացմանը շատ մնաս ե տալիս սեփագրություն անելու սովորությունը: Ցերքուսանողն այն գիտակցությունն ունի, թե իր գրածը սեագրություն ե, ապա նա անփուլթ ե վերաբերվում գործին, վորի հետեանքով բազմաթիվ սխալներ (շարադրական, ուղղագրական, կետագրության և այլն) են սպրդում: Այդ սխալները հետո, յերբ սեից արտագրում են, անցնում են «մաքուր»-ի մեջ, վորով «մաքուրն» այնքան ել մաքուր չի լինում: Մինչդեռ յերբ ուսանողն այն գիտակցության ե, թե իր խոսածը կամ գրածը — ամենայն մանրամասնությամբ և ամբողջությամբ — իր վերջին խոսքն ե (իսկ այդ գիտակցության ենա, յերբ անմիջորեն «մաքուր»-ն ե գրում), ապա նա պատասխանատու կզգա իր ամեն մի արտահայտության համար: Դրա հե-

տեանքն այն կլինի, վոր նա սեագրությունը կը-
փոխադրի իր ներսը և գրելուց առաջ կաշխատի
ճիշտն իմանալ, ապա դրել, վորով և կկանխի
հնարավոր սխալները և սկզբից եեթ ճիշտ դրե-
լուն կվարժվի:

Սրանից հետեւում ե, վոր ուսուցիչը պիտի աշխա-
տի «սև» գրելու մտայնությունն արմատախիլ
անել ուսանողների միջից և վարժեցնի նրանց
«մաքուր» մտածել և «մաքուր» դրել:

Այս բանն սկզբում անշուշտ բավական ժամա-
նակ կխլի. Բայց դա ժամանակի վատնում չե,
վորովհետեւ լեթե ուսանողը դրան (անմիջապես
«մաքուր» գրելուն) վարժվելու ընթացքում ժա-
մեր ե կորցնում, ապա վարժվելուց հետո՝ ամ-
բողջ կյանքում որեր ու շաբաթներ և տնտե-
սում:

17. Պիտի հանձնարարել, վոր ուսանողն ու-
նենա և ամենայն խնամքով պահպանի մի «ալ-
րում», վորի մեջ նա սովորություն պիտի դարձը-
նի արտագրել իր հավանած վոտանավորները,
զանազան ցիտատներ ու քաղվածներ, գրախո-
սականներ, հուշեր, դիտողություններ ու խոր-
հրդաժություններ, ոգտակար գիտելիքներ ու
տեղեկանքներ, սեփական ստեղծագործություն-
ներ և այլն:

Ալբոմը պիտի լինի նրա սեղանի գիրքը, ու-

նենա իր հատուկ բաժանմունքները, ուր ըստ
բովանդակության դասավորված զետեղվեն վերե-
լի նյութերը:

Դ. ԻՄԱՍՏԱԼԻՑ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթարանի կարևորագույն խնդիր-
ներից մեկն ե՝ ընթերցանության տեխնիկան այն
աստիճանի հասցնել, վոր նա դառնա հասարակա-
կանորեն-ոգտագործ վարժութ (հանրականացություն):

2. Կարդալ կարենալ նշանակում ե՝ «տառերով
կուահել այն բառերը, վորոնք պայմանանշված են
նրանցով» (պրոֆ. Նեչակ): «Աչքերը ցատկում-
ներով շարժվում են տողի ընթացքով՝ թոռոցիկ
ընդգրկելով տառերի վերին ծայրերը: Աչքերն
ընդգրկում են 4—6 բառ և նրանց ընդհանուր
գծագրությունից ճանաչում են այդ բառերը և
վոչ թե նրանց գծագրական տարրերի մանրամասն
վերլուծությունը դանդաղ ե ընթանում, վորովհետեւ
այդ դեպքում վոչ թե մի բառի կամ 3—6 բա-
ռերից կազմված մի բառախմբի ամբողջությունն
ե ընդգրկվում, այլ միայն նրա մասերը:

3. Ընթերցանության սխալները լինում են.—

ա) տառեր են բաց թողնվում (հարց-հաց,
դաշտ-դատ).

բ) տառեր են ավելացվում (ամաչել· ամանչել·
կանաչ· կանանչ).

գ) նմանահնչյունը բառերը շփոթվում են (բարձ-
բարձր, համր-համար).

դ) նման տառերը շփոթվում են (դեղ-դեղ,
գարի-գարի).

ե) վերջավորությունները լրիվ չեն կարդաց-
վում (գնացին-գնաց):

4. Կարդալ վարժվելու նպատակն ե-

ա) ընթերցանության տեմպն արագացնել (մո-
տեցնել կարդացողի խոսելու տեմպին).

բ) սխալներն արմատախիլ անել.

գ) ընդարձակել ընթերցանության տեսադաշտը.

դ) իմաստավորել ընթերցանությունը և ար-
տահայտիչ դարձնել (մոտեցնել խոսակցական
արտասահմանությանը):

5. Ընթերցանության լերկու ձև կա՝ ա) բարձ-
րաձայն ընթերցանություն, լերբ դասարանում
մեկ-մեկ հերթով կարդում են և մյուսները հե-
տևում (աչքով և ականջով). բ) լուռ ընթերցա-
նություն, լերբ բոլորը միաժամանակ մտքներում
կարդում են:

6. Զնալած մեզ մոտ ամենից շատ տարածված
ե բարձրաձայն ընթերցանությունը, սակայն նա-
ունի բազմաթիվ թերություններ, վորոնք բղխում
են դասարանական պայմաններից և ընթերցա-
նության պրոցեսի բնույթից:

Այդ թերութիւններից գլխավորներն են.—

ա) Յեթե կարդացողը դասարանի ուժեղ աշակերտներից ե, ապա մյուսները միայն ականջով կարող են հետևել կարդացածին և վոչ տեսողութիւամբ. Այդ դեպքում աչքն ու ականջն իրար խանգարում են, և լսողները չեն կարողանում կարդալու վարժութիւնն ձեռք բերել:

բ) Յեթե կարդացողը դասարանի թույլերիցն ե, ապա մյուսները չեն համբերում նրա վոտով գնալ և առաջ են ընկնում, վորով աշխատանքի միասնութիւնը խանգարվում ե. իսկ այդ հանգամանքը միայն բացասական հետևանքներ կարող ե ունենալ:

գ) Բարձրաձայն կարդալիս ամեն մի սովորողին միայն 5—6 րոպե յե բաժին ընկնում, վորով ամեն մեկը շատ ավելի քիչ ե ընթերցանութիւնն պրոցեսը կատարում, քան լուռ ընթերցանութիւնն դեպքում:

դ) Հենց այն միտքը, թե ուսուցիչն ու դասընկերները գնահատելու դիտումով իր կարդալուն հետևում են՝ խանգարում ե կարդացողին այնպես կարդալ, ինչպես նա առհասարակ կարող ե, վորով նա ավելի վատ ե կարդում, քան մենակ յեղած դեպքում: Իսկ դա վորեւ արդյունքի չի հասցնում:

էե) Կյանքում մենք մեծ մասամբ լուռ ենք կար-

դում և լուր կարդալիս ավելի լավ ենք հասկանում, վորովհետև արտաքերության տեխնիկան ավելորդ ուշադրություն և եներգիա չի խլում. մինչդեռ բարձրածայն ընթերցանությունն այդ անտեսում ե:

զ) Ներկայումս կյանքի կոլեկտիվ կողմի գարգացման հետևանքով մենք ստիպված ենք կարդալ ընթերցարաններում, գրադարաններում և այլն: Այդպիսի պայմաններում լուր ընթերցանության վարժությունն ավելի հասարակականորեն կարեոր ե, քան բարձրածայնինը:

Այս բոլորն ինկատի ունենալով պետք ե լուր ընթերցանությանը գլխավոր տեղը հատկացնել դպրոցներում:

7. Սակայն այս չի նշանակում, թե բարձրածայն ընթերցանությունը միանգամայն պետք ե վտարել դպրոցներից: Բնավ: Բարձրածայն ընթերցանությունն ել իր ոգուտներն ունի: Նույնիսկ լուր ընթերցանության ժամանակ մենք անգիտակցաբար բերանը և ձայնական որդանները շարժում ենք և, լավ հասկանալու նպատակով, մտքներումս արտասանում ենք կարդացածը: Ուրեմն լուր կարդալիս ել անհրաժեշտ ե բառերն արտասանելու վարժությունն ունենալ: Իսկ բառերը ճիշտ և արագ արտասանելու վարժությանը մեծապես նպաստում ե բարձրածայն ընթերցանությունը:

8. Սակայն բարձրածայն ընթերցանությունը դասարանի թուլլերի և ուժեղների համար հետաքրքրական դարձնելու նպատակով անհրաժեշտ ե այն իմաստավորել։ Իսկ իմաստավորելու համար պետք ե՝

ա) Ներածական զրուցն այնպես կազմել, վոր ուսանողը կարդալուց առաջ ընթերցանության տեխնիկայի և արտասանության տեսակետից դժվար բառերը դասատուի զրուցի մեջ հաճախակի լսեր կամ գրած տեսներ գրատախտակի վրա։

բ) Սկզբնական շրջանում, ներածական զրուցից հետո, նախ ուսուցիչն ինքը կարդա, ապա՝ ուժեղ ուսանողները, հետո՝ թուլլերը։ Յեթե ուսանողը սխալներ ե անում, ուսուցիչը պիտի տեղն ու տեղն ուղղի և կրկնել տա ուսանողին։ Սակայն ուսուցչի այդ միջամատությունն այնքան հաճախ չպիտի լինի, վոր ուսանողների մտքի թելը կտրի։ Եթե սխալը չի աղավաղում կարդացածի իմաստը, կարիք չկա ընդհատելու և ուղղելու, մանավանդ վոր այդ միջամտությունները կարող են ուսանողի ինքնավստահությունը խախտել և հետևանքն ավելի վատ լինի։

գ) Ուսանողի կարդալուց հետո ուսուցիչը հարցեր ե տալիս՝ միայն ստուգելու համար, թե ուսանողը կարդացածի հիմնական միտքը հասկա-

ցԵլ ե թե վոչ (վերապատմել տալը միտք չունի, վորովհետև ժամանակ շատ ե խլում, մինչդեռ արդյունքը չնշին ե, վորովհետև պատմում են՝ իրենց սովորական լեզվով. իսկ սովորական լեզուն ուղղելու համար հարգ չկա անպայման վերապատմումը ծառայեցնել իբրև առարկա):

9. Հետագա շրջանում, յերբ կարդալու տեխնիկան այն աստիճանի յե հասել, վոր իմաստն ըմբռնելու համար այլևս խոչընդուն հանդիսանալ չի կարող, պետք ե բարձրաձայն ընթերցանությունը նվազեցնել և շատ տեղ տալ լուր ընթերցանությանը: Այս շրջանում բարձրաձայն ընթերցանությունն ունենալու յե լոկ սպասարկուստուգողական դեր: Սկզբում ուսանողները կարդում են մտքներում, անում են ընդգծումներ, քաղվածներ: Այնուհետև ուսուցիչը պահանջում ե մեկից, վոր նա կարդա հոդվածի այն հատվածը կամ պարբերությունը, վոր վերաբերում ե այսինչ խնդրին: Սա կարդում ե: Մյուսները հետևում են և ստուգում, արդյոք ճիշտ ե ընտրել կարդացողն այդ հատվածը, ավել ե կարդում, պակաս:

Այդպիսի քաղվածներ և ընդգծումներ կատարում են ուսանողներն սկզբում 2—3 հոգուց բաղկացած խմբակներով, հետո ջոկ-ջոկ՝ անհատաբար:

10. Ավելի բարդ ե լուռ ընթերցանությունը պլանով։ Ուսուցիչը կազմում է հողվածի պլանը և գրում գրատախտակի վրա։ Ուսանողներն արտագրում են այդ պլանը տետրերում և սկսում են հողվածը լուռ կարդալ։ Այնուհետև ուսուցիչը խնդրում է վորես ուսանողի՝ կարդալ հողվածի այն մասը, վոր վերաբերում ե պլանի այսինչ կետին։ Մյուսներն ստուգում են։

11. Այսպիսի միքանի վարժություններից հետո ուսանողին պիտի առաջադրել՝ հողվածը կարդա և պլանն ինքը կազմի։ Այս աշխատանքն ավելի բարդ ե ու դժվար, ուստի դրան պիտի անցնել աստիճանաբար՝ նախապատրաստական վարժություններ անելուց հետո։

12. Ընթերցանության բարձր աստիճանը — դա կարդան ե՝ զեկուցման համար պատրաստվելու նպատակով։ Առաջարկվում ե, վոր ուսանողները մեկ կամ, նույն թեմային վերաբերող, միքանի հողվածներ կարդան և զեկուցեն՝ բերելով քաղաքածներ և ցիտատներ։

13. Բացի ընթերցանության տեխնիկայից և իմաստավորումից կարենը ե նաև ընթերցանության արտահայտիչ լինելը։ Այս դեպքում խոշոր նշանակություն են ստանում կետերը, մանավանդ առողջանության նշանները։ Բացի այդ՝ վարժություններ պիտի անել նշելու համար, թե

Խոսքի մեջ իմաստի տեսը վեր բառի վրա լեւ
Որինակ՝

Աշխատավոր գլուղացին բանվորի դաշնակիցն
և (և վոչ թե, որինակ, կապիտալիստի):

Աշխատավոր գլուղացին բանվորի դաշնակիցն
և (և վոչ թե հակառակորդը):

Աշխատավոր գլուղացին բանվորի դաշնակիցն
և (և վոչ թե՝ չե՞):

Աշխատավոր գլուղացին բանվորի դաշնակիցն
և (և վոչ թե, որինակ, կուլակը):

14. Ընթերցանության վարժության կատար-
յալ աստիճանն այն կինի, յերբ կարդացողին
չտեսնողը հենց իմանա, թե վոչ թե կարդում են,
այլ կենդանի խոսում են։ Այս աստիճանին կա-
րելի յեւ մոտենալ, բայց դրան համել չենք կա-
րող, վորովհետեւ խոսելիս՝ միտքը արտասանված
բառերից առաջ կա խոսողի գլխում և ըստ այդ
մտքի յեւ բառերն արտասանվում են, իսկ կար-
դալիս միտքը դուրս ե բերվում միայն արտա-
հայտված (գրավոր) բառերն ընդգրկելուց (աչ-
քով) նետո։ Սակայն չնայած դրան՝ մեր նպատա-
կը պետք ե լինի դրանց միջի հեռավորությունը
նվազագույնի հասցնել և ընթերցանությունն ըստ
հնարավորության մոտեցնել խոսելուն։

8Ե. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ուղղագրության նպատակը հանրակրթա-
րաններում այն չե, վոր ուսանողը բոլորովին

անսխալ գրի, ալլ այն, վոր գրվածն այնքան գրագետ լինի, վոր չխանգարի միտքը պարզ և վորոշ ըմբռնելուն:

2. Այս նպատակին հասնելու համար ուշադրություն պիտի դարձնել վոչ այնքան կանոնների վրա, վորովհետև կանոնները շատ աննշան դեր են խաղում ուղղագրությունը ոռվորելու մեջ,— վորքան վարժության վրա:

3. Ուղղագրության վարժությունը հիմնված ե էերեք զգայության՝ տեսողության, լսողության և շարժողական զգայության վրա:

Այդ զգայություններից վերջին լերկուսը շատ քիչ բանում կարող են ոգնել ուղղագրություն սովորելուն, վորովհետև շարժողական զգայությունը (ձեռքի շարժումը գրելիս) շատ անորոշ ե, ուստի և չի կարելի նրան վստահել: Իսկ ինչ վերաբերում ե լսողությանը, ապա պետք ե ասել, վոր նա հաճախ խանգարում ե ուղղագրության և սխալների աղբյուր դառնում, ինչ չափով վոր արտասանության և գրության մեջ զուգահեռականություն գոյություն չունի: Իսկ մենք մեծ մասամբ ուրիշ ձևով արտասանում ենք, ուրիշ ձևով գրում: Նույն բաղաձայնը — և այդ վերաբերում ե համարյա մեր բոլոր բաղաձայներին - տարբեր ե արտասանվում, նայած թե նա բառասկզբին ե ընկնում, բառամիջին, թե բա-

ուավերջին. մես, թե այն բաղաձայնի հետ միասին ե արտասանվում (ձու, ոձ, տանձ,—ձն առաջին բառում «ձ» ե արտասանվում, յերկրորդորմ՝ «ց», յերրորդում՝ մոտենում ե «ծ»-ին):

4. Յեթե լսողությունն ու շարժողությունը շատ չնշին չափով են նպաստում ուղղագրությանը կամ հաճախ շփոթության առիթ են տալիս, ապա միակ որգանը, վորին վստահել և վորի վրա հիմնվել կալելի յե, դա տեսողությունն ե: Այսինքն ուղղագրության վարժվելու համար պետք ե շատ և ուշադիր կարդալ և կարդացածը դիտել:

5. Ուղիղ գըել սովորեցնելու նպատակով վոչ թե սխալները յետին հաշվով պիտի ուղղել, այլ պիտի կանխել. այսինքն՝ վոչ թե պիտի թողնել, վոր սխալ գրվի, և հետո ուղղել, այլ պետք ե ճիշտն առաջուց տալ (զանազան մանկավարժական ձևերի միջոցով, վորոնց մասին հիմա կխոսենք): Յեթե կանխելով հանդերձ այնուամենալնիվ սխալներ են արվում, ապա դրանց ուղիղ ձևը պետք ե հետագալի համար ամրապնդել դարձլալ կանխելու միջոցով, առանց վոր ուսանողն իր սխալին անդրադառնա: Ուսանողը միշտ պետք ե ճիշտը տեսնի, դիտի, դիտակցի, վոր ճիշտը դառնա նրա համար սովորութիւն:

6. Յեթե տեսողությունն ե ուղղագրություն

սովորեցնող որդանը, ապա արտագրությունը
դառնում ե ուղղագրության վարժվելու հիմնա-
կան գրավորի տեսակը:

Մական մեքենական արտագրությունը վոչ
միայն չնշին ոգուտ ե տալիս, այլ հաճախ մսա-
սակար ե, վորովհետեւ՝

ա) Մեքենական արտագրությունը հոգեմաշ,
անհետաքրքիր և տաժանելի աշխատանք ե:

բ) Մեքենական արտագրության դեպքում սո-
վորաբար արտագրում են բառ առ բառ, վանկ առ
վանկ, հաճախ նույնիսկ տառ առ տառ, իսկ ամ-
բողջական իմաստը, վոր խոսքի մեջ ե պարու-
նակվում, անտեսվում ե, - մի յերեսութ, վոր
խիստ արհեստական ե և հակաբնական:

7. Մեքենական արտագրությունը պիտի փո-
խարինել գիտակից յեվ շահագրգիռ արտագրու-
թյամբ, վոր ստացվում ե՝

ա) Յերբ արտագրությունն արվում ե ըստ
հարցերի: Զրուցից, հոդվածը կարդալ-վերլուծե-
լուց հետո, դասատուն տալիս ե հարցեր, վորոնք
վերաբերում են հոդվածի բնորոշ, ելական և հե-
տաքրքրական կետերին, և վորոնց պատասխանն
ուսանողը գտնում հանում ե հոդվածից և ար-
տագրում:

բ) Յերբ ուսուցիչը, դժվար բառերը բացատ-
րելուց և գրատախտակի վրա գրելուց հետո, ա-

ուաջարկում ե խոսքեր կազմել և գրել, վորոնց մեջ
այդ բառերը գործածվեն:

գ) Յերբ այնպիսի հարցեր են տրվում, վորոնց
պատասխանը լինում է մի դժվար գրվող բառ,
վոր ուսանողը գրքից կամ գրատախտակից պի-
տի արտագրի իր լրիվ պատասխանի մեջ:

դ) Յերբ ուսուցիչը բացատրում ե նման ար-
տասանություն, բայց տարբեր իմաստ ունեցող
ուղղագրությունը (գիրկ, գիրք, կիրք և այլն) և
համապատասխան խոսքեր կազմել ու արտագրել
տալիս:

լե) Յերբ ուսուցիչը զանազան ածանցներով
(յուն·ուն, ած-աց ացած, ություն·ույթ, լան և այլն)
բառեր (հնչյուն·հնչուն, գրած·կարդաց·կարդա-
ցած, նորություն·ձանձրութ և այլն) կազմել և
ամբողջական խոսքերի մեջ արտագրել ե տալիս:

զ) Յերբ դասատուն դժվար գրվող բառերը
գրքում ընդգծել և ամբողջական խոսքերով ար-
տագրել ե տալիս:

ե) Յերբ խոսքի բաց թողնված բառերն ուսա-
նողի կողմից լրացվում են:

8. Ուղիղ գրելուն վարժեցնում ե նաև դիտո-
ղական թելադրությունը: Ուսուցիչը գրում է
գրատախտակի վրա մի խոսք, վերլուծում են
այն, ուշադրություն դարձնում դժվար բառերի
ուղղագրության: Այնուհետև գրվածը ջնջում են

և նույնը գրում են հիշողությամբ։ Նույնը կարելի է անել վոչ թե գրատախտակից, այլ գրքից։ Դիտողական թելադրությունն իսկապես հիշողությամբ արտագրություն եւ։

9. Ուղղագրությանը նպաստում եւ մասամբ նաև բառերի վերլուծությունն ըստ կազմության։ Այդ վերլուծության ժամանակ հատուկ ուշադրություն պիտի դարձնել դժվար գրվող ածանցների և վերջավորությունների վրա։

10. Թեև ասացինք, վոր տառասխաներն ուղղելը (սխալ պարունակող բառն ընդգծելով կամ առանց ընդգծելու բառի վերեւ, լուսանցքում կամ գրավորի տակը գրելով, սխալ տառը քերելով և տեղը ճիշտը գրելով և այլն) միտք չունի, համենայն դեպս այնքան արդյունք չի տա, վորքան եներգիա չե վատնվում, — սակայն այդ չի նշանակում, թե ուսուցիչը պիտի կատարված սխալները չուսումնասիրի։ Ընդհակառակն Ուսուցիչը պիտի ցուցակագրի բոլոր կարեոր սխալները իր հատուկ ծոցատետրում, տեսնի, թե դրանցից վնր սխալներն ավելի անհրաժեշտ և նպատակահարմար եւ արմատախիլ անել, ապա ամբողջ տարվա ընթացքում, բոլոր դասերին և ամեն պատեհ առիթի աշխատի կանոնաման միջոցով (գիտակից և շահագրգիռ արտագրությամբ և դիտու-

ղական թելադրությամբ) և սիստեմատիկ կերպով վերացնել այդ սխալները:

Զ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քերականությունից հասակավորների հանրակրթարաններում պետք ե շատ քիչ բան անցնել. անցածն ել պիտի նպաստի լեռեք բանի՝ կարդալ-հասկանալուն, կետադրությանը և ուղղագրությանը: Իսկ դրանց նպաստում են՝ բառերի կապակցությունը ասուլիթների մեջ, ասուլիթների կապակցությունը խոսքերի մեջ և բառերի կազմությունը:

2. Քերականությունն անցնելիս պիտի սկսել ամբողջական խոսքերից («ասացվածներից»), վորովինետև իմաստը միայն ամբողջական խոսքի մեջ ե գտնվում, մինչդեռ բառերը և ասուլիթները խոսքից դուրս իմաստ չունեն: (Այդ մասին կարդա «Ժող. Լուսավորություն» № 3, եջ 20—27 և № 4, եջ 17—21, Հ. Հարությունյանի «Հայերենի քերականությունը մեր դպրոցներում» և «Հայերենի քերականության սիստեմի մասին» հոդվածները):

Սկզբում պետք ե իբրև որինակ վերցնել 2—3 բառից բաղկացած պարզ խոսքերից բաղկացած մի փոքրիկ հատված, կամդալ և ուշա-

դրություն դարձնել տալ ձայնի լեկեջի վրա:
Ուսանողն այդ դեպքում հեշտությամբ կնկատի,
վոր ամեն մի խոսք, վոր ունի վի ամբողջական
միտք, կամ տալիս ե վի փոքրիկ պատկեր, մի-
աժամանակ և մի ձայնական (արտասանական)
ամբողջություն ե կազմում. այսինքն՝ նա կնկա-
տի, վոր կարդալիս ձայնը բարձրանում, հետո
իջնում ե, և մենք խոսքը վերջանալիս դադար
ենք առնում: Ուրեմն խոսքը և իմաստալին, և
տեսողական (յեթե մենք կարդացածի բովան-
դակությունը վոնց վոր կինուենտի վրա պատ-
կերացնելիս լինելինք՝ իբրև դեպքերի հաջորդա-
կանություն կամ տեսարանների կցորդում), և
ձայնական մի ամբողջականություն ե ներկա-
յացնում:

Խոսքի այդհատկությունները դիտելիս՝ պետք
ե նկատել տալ, վոր ամեն մի ամբողջական խոս-
քից հետո (յերբ իմաստալին միավորը վերջանում
ե, յերբ տրված ե լինում մի տեսողական պատ-
կեր, յերբ ձայնն իջնում ե և դադար ենք առ-
նում) դրվում ե վերջակետ: Ուրեմն վերջակետը
պիտի անցնել խոսքի հետ միասին:

Վերցված խոսքերը բացի պարզ լինելուց,
պետք ե թե մտքով, թե արտահայտած պատկե-
րի կողմից և թե արտասանության տեսակետից
իրարից վորոշակի կերպով տարագծվեն, վոր-

պեսզի ուսանողը հեշտությամբ դիտի թե՛ անջրը-
պետը և թե՛ կապը և կարողանա գտնել վերջա-
կետի տեղը:

Պարզ (2—3 բառից բաղկացած) խոսքերից
հետո պետք ե վերցնել հետզհետե ավելի բարդ
(4,5,6,7... բառերից բացկացած), բայց դեռևս
միայն մի ասույթից («Նախադասությունից»)՝
բաղկացած խոսքեր և վերջակետի գործածու-
թյան ու խոսքն իմաստալից արտասանելու վար-
ժութին ամրապնդել:

3. Յերբ պարզ խոսքը բավականաչափ լու-
րացրել են, պետք ե վերցնել յերկու ասույթից
բաղկացած խոսքեր և (դարձալ իմաստի, տե-
սարանի, արտասանության տեսակետից) դիտել։
Այստեղ ուսանողը, դասատուի՝ գլխի քցող հար-
ցերի ոգնությամբ, կնկատի, վոր խոսքը բաղ-
կացած ե յերկու մասից, վոր յերկու պնդումից
մի ամբողջական միտք ե ստացվում, յերկու
պատկերից՝ մի ամբողջական տեսարան, յերկու
ընդհատված ձայնագծերից՝ մի ամբողջական ար-
տասանություն։

Այստեղ ուսանողին պիտի գաղափար տալ ա-
սույթի և դրա հետ կապված՝ ստորակետի մա-
սին, վորով բաժանվում են նույն խոսքի մասը
կազմող ասույթներն իրարից։

Ուրեմն սկզբում ստորակետի մասին պիտի
գաղափար տալ ասույթի հետ միասին։

Այնուհետև յերկու ասուլիթից բաղկացած խոսքերին պիտի հաջորդեն Յ, Հ և ավելի ասուլիթներից բաղկացած խոսքերի վարժությունները:

4. Ամբողջական խոսքերն ասուլիթների վերլուծելիս՝ պիտի նշել, թե ինչ հարաբերության մեջ են ասուլիթները (համադաս, թե ստորադաս), վորն ե խոսքի առանցքը կազմող (գլխավոր) ասուլիթը, վորն ե յերկրորդականը կամ լրացականը: Այս վարժությունը կնպաստի ամբողջական խոսքի հիմնական իմաստն ըմբռնելուն:

5. Յերբ ամբողջական խոսքն ու նրա մասը կազմող ասուլիթները բավականաչափ լուրացված են, պետք ե անցնել ասուլիթները բառերի վերլուծելուն, վորի ժամանակ պիտի բացատրել, թե ասուլիթի գլխավոր առանցքը կազմում ե պնդող կամ ժխտող բառը (բայ), վորը անել կամ լինել ե ցուց տալիս և առանց վորի ասուլիթ կամ խոսք չկա:

6. Բայը լուրացնելուց հետո անհրաժեշտ ե դադարակար տալ նաև—բառերի՝ վորպես ասուլիթի անդամների՝ կարեռության կարգով—յենթակայի մասին, վոր յերկրորդ կարևոր բառն ե ասուլիթի մեջ: Այդ բանը պետք է ստորակետի գործածության համար (յերբ ասուլիթները տարբեր յենթականեր ունեն և «և» կամ «ու»-ով են կապված, ապա «և»-ից կամ «ու»-ից առաջ դրվում ե ստո-

բակետ): Բացի այդ՝ դա հնարավորություն կտա
գաղափար տալ անունների մասին, վոր լինում
են հատուկ յեվ հասարակ. իսկ սա պետք ե ուղ-
ղագրության համար (հատուկ անունները մեծա-
տառ են գրվում):

7. Յերբ ասուլիթները վեր ենք լուծում բա-
ռերի, պետք ե որինակներ բերել խոսքի բազմա-
կի անդամն ըի (կրկնվող, թվարկվող բառերի),
վորոնք բաժանվում են ստորակետով: Յեթե դրան
ավելացվեն նաև միջանկալ ասուլիթների կամ
բառերի, ինչպես նաև կոչական բառերի ստորա-
կետով բաժանվելու դեպքերը, ապա ուսանողնե-
րը լերկորդ կարեոր կետի՝ ստորակետի (առա-
ջին կարեոր կետը վերջակետն ե) գործածության
դիսավոր դեպքերը սովորած կլինեն:

8. Ասուլիթները բառերի վերլուծելիս պետք
են շել, թե վոր բառը վորին ե վերաբերում (կազ-
մել զուգակից բառեր), հետևյալ ձևով. վերցնենք
«անգրագետ մարդը քաղաքականությունից դուրս
ե» լոգունզը և զուգակից բառեր կազմենք: Այս
խոսք ասուլիթի կենտրոնն ե (վոր ուրիշ բառի
լրացումը չե):

ե

անգրագետ — մարդը


մարդը — ե

քաղաքականությունից — դուրս

դուրս — ե:

Այս զուգակցումը մեծապես նպաստում է խոսքը ճշգրիտ ըմբռնելուն։

Շատ ոգտակար է բառերի այսպիսի զուգորդումից (բանավոր) հետո կազմել խոսքի սքեմ, վորի վրա ուսանողը շոշափելի կերպով կտեսնի խոսքի կառուցվածքը, բայի դերը և այլն (այդ մասին տես՝ «Ժող. Լուս.» 1927 № 3, եջ 20, Հ. Հարությունյանի հոդվածը՝ «Հայերենի քերականությունը մեր դպրոցներում»)։ Որինակ (նույն խոսքի սքեմը).—



9. Բառերը վանկերի և վանկերն հնչյունների վերլուծելիս պիտի գաղափար տալ հնչյունի (ձայնավոր, բաղաձայն, լերկայն) և գրի (մեծատառ, փոքրատառ), պարզ, բարդ և ածանցավոր բառերի (հոլովական և խոնարհման վերջավորություններն ել համարելով ածանցներ) մասին, ինչ չափով վոր այդ կոգնի տողադարձությանն ու ուղղագրությանը։ Հատուկ ուշք պիտի դարձ-

նել լերկձայների (լա, լո, լու, լի, լը, լե, ույ,
ոլ, ել, ալ) վրա, վորոնց ուղղագրությունը
դժվար է, ինչպես և միքանի դժվար գրվող ա-
ծանցների վրա (թիուն, լուն, լակ, ած, աց,
աշած և ալն):

Սրանից ավելի քերականություն պետք չե-
անցնել հանրակրթարաններում:

III. ԻՆՔՆԱԶԱՐԴԱՑՈՒՄ

Հանրակրթարանի ուսուցչի նպատակն այն
պետք է լինի, վոր ուսանողի դասարանական
և տնալին (արտադպրոցական) լեզվական աշ-
խատանքները ղեկավարելով՝ նրան այն աստի-
ճանի հասցնի, վոր նա կարողանա առանց ու-
սուցչի ևս նույն աշխատանքները կատարել:

Վորպեսզի ուսանողն ինքնազարգացման մի-
ջոցով կարողանա իր լեզվական ունակությունները
զարգացնել, անհրաժեշտ ետակ նրան հետեւալ
ցուցմունքները, վոր վերաբերում են գրել և
կարդալ վարժվելուն:

Ա. ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵԼ ԿԱՐԴԱԼ

1. Կարդալը նույնպիսի մի վարժություն է,
ինչպես քայլելը, խոսելը, նվագելը, լողալը և
ալն:

2. Կարդալու վարժությունը ձեռք բերելու

համար պետք ե շատ կարդալ. ինչպես քայլել
սովորելու համար՝ պետք ե շատ քայլել, նվագել
սովորելու համար՝ շատ նվագել և ալին:

Ի՞նչ ե նշանակում շատ կարդալ:

Շատ կարդալ նշանակում ե՝

ա) Ամեն որ կարդալ: Կարդալը պիտի դառնա
մեր ամենորյա զբաղմունքներից մեկը: Յեթե
մենք կարդում ենք լերկար ընդհատումներով,
յեթե մենք որերով, շաբաթներով վոչինչ չենք
կարդում, մենք հետզհետե կորցնում ենք կար-
դալու վարժությունը և մեր թափած չարչա-
րանքը ջուրն ե ընկնում: Որական գոնե մի փոք-
րիկ հատված պետք ե կարդալ:

բ) Պետք ե կարդալ վոչ շատ քիչ, վոչ ել հոգ-
նելու չափ շատ: Քիչ կարդալու դեպքում մեր
վարժությունը չի ավելանում, այլ հաճախ պա-
կասում է: Յեթե ամառը, դաշտալին աշխատանք-
ների պատճառով, ժամանակ չունիս, կարդա-
այնքան, վոր ձեռք բերածդ վարժությունը յեթե
չավելանա, գոնե չպակասի: Իսկ ձմեռը, յերբ
ժամանակ շատ ունես, անընդհատ մի կարդա-
այնքան, վոր հոգնես: Հենց վոր նկատեցիր, թե
սկսում ես հոգնել, իսկույն աշխատանքդ փո-
խիր, կամ հանգստացիր: Հետո նորից սկսիր կար-
դալ: այնպես վոր նույն որվա ընթացքում կար-
դալուդ գործողությունը հանախակի կրկնվի:

3. Պետք է կարդալ վոչ շատ դժվար, վոչ ել
շատ հետև բաներ: Շատ դժվար գրվածք-
ները շուտ են հոգնեցնում, արդյունք չեն տա-
լիս և ընթերցանության սերը մեռցնում են:
Շատ հեշտ, իմացած բաներն ել շուտ ճանձրալի
յեն դարձնում ընթերցանությունը և դարձյալ
արդյունք չեն տալիս: Ուստի՝

ա) Ընթերցանությանդ նյութերը դասավորիր
այնպես, վոր նետարքիր նետից գնաս դեպի հաս-
կանալի դժվարը: Յեթե ինքդ այդ դասավորու-
թյունը չես կարող անել, դիմիր տեղիդ ուսուց-
չի, գրադարանապետի, խրճիթվարի կամ
առհասարակ մի իմացող մարդու խորհրդին:
Դու պետք ե զգաս, վոր յուրաքանչյուր հաջորդ
կարդալիք նյութը մի նոր բան ե ավելացնում
իմացածիդ վրա:

բ) Յեթե մի վորեն հոդվածի (կամ գրքի)՝
բովանդակությունը լավ լուրացրել ես, կարիք
չկա այն նորից կարդալու, կարդա մի նոր բան:
Ինչ ել վոր կարդաս, ելի կարդալու վարժվում
ես:

4. Կարդա դանդաղ, ուշադիր և հանգիստ, վոր-
պեսզի թե բովանդակությունը լավ հասկանաս
և թե դիտել կարենաս, թե ինչ բաներն են
քեզ առանձնապես դժվարություն պատճառում:
Յերբ ինքդ թերություններդ ճանաչեցիր, հեշ-

տությամբ կկռվես դրանց դեմ: Մարդ կա՝ արագ
ե կարդում, խոսում և ալին, մարդ կա՝ դանդաղ:
Դիտիր, թե դու ինչ արագությամբ կարդալու
ժամանակ կարդացածդ լավ հասկանում ես, և
կարդա դբանից վոչ շատ արագ, վոչ ել շատ
դանդաղ:

5. Կարդա առհասարակ լսելի ձայնով, վորպես-
զի հեշտությամբ ստուգես՝ ճիշտ ես կարդում,
թե սխալ բայց և վարժվիր լուր ընթերցանու-
թյան, մանավանդ յերբ արդեն բավականաչափ
կարդալու վարժ ես:

6. Կարդա լավ առողջանությամբ, այնպես, վոր
լսողն այն տպավորությունն ստանա, թե դու
վոչ թե կարդում, այլ խոսում ես:

7. Կարդալիս ի նկատի ունեցիր, վոր շատ
բառեր այնպես չեն արտասանվում, ինչպես
գրված են:

8. Ուշադրություն դարձրու կետադրության:
Կետերը կոգնեն քեզ այնպես կարդալու, վոր
հենց իմանաս՝ խոսում ես:

9. Կարդալիս մոտ ունեցիր թուղթ ու գրիչ
կամ մատիս, վորպեսզի՝

ա) Դիտողություններդ գրես:

բ) Նավանածդ կտորներն արտագրես, կամ
համառոտ նշանակես:

գ) Գրքի բովանդակությունից քեզ համար կա-
րևոր կետերը գրես:

10. Գիրքը (կամ հոդվածը) վերջացնելուց հետո՝
դիտողություններիդ ու քաղվածքներիդ հիման վրա
քեզ հաշիվ տուր, թե ինչ սովորեցիր այդտեղից:
Նոր ձեռք բերած գիտելիքներդ գրիր հուշատես-
րումդ:

11. Յերբ գիրքը կամ հոդվածը վերջացնելուց
հետո նկատում ես, թե վորոշ կետեր պարզ չես
լուրացրել, — նորից կարդա այդ կետերին վերա-
բերող մասերը: Մինչև վոր գրքի կամ հոդվածի
հիմնական մտքերը լավ չհասկանաս, ուրիշ բա-
նի չանցնես: Յերբ ինքդ չես կարող այդ անել,
դիմիր իմացողներին:

12. Կազմիր անծանոթ բառերի և արտահայ-
տությունների բառարան և բացատրությունը
հարցրու իմացողից ու գրիր:

13. Կարդալու, ինչպես և բոլոր աշխատանք-
ներիդ մեջ թող լինի պլան (կարգ). պետք և
ունենաս աշխատանքներիդ՝

ա) Ուսական պլան. — պետք ե իմանաս՝ այսոր
քանի՛ ժամ, յերբ, քանի՛ անգամ ինչ պիտի անես
(կարդաս և այլն):

բ) Շաբաթվա պլան. — այս շաբթում վնար
աշխատանքներիդ ինչ մասը պետք ե վերջացնես:

գ) Ամսական և (ձմեռվա, ամառվա, գարնան,
աշնան) սեզոնային պլան. — այսինչ առարկալից
ինչքան պիտի սովորես, այսինչ հարցի մասին

ինչ հոդվածներ և գրքեր պիտի կարդաս և այլն:

14. Յուրաքանչյուր աշխատանք ավարտելուց
հետո քեզ հաշիվ տուր, թե ինչ ես սովորել,
ինչպես ես սովորել, ինչն ե թերի մնացել, ին-
չու: Ունեցածդ փորձն ի նկատի ունենալով
կազմիր հետագա աշխատանքներիդ պլանը:

Կարիքի դեպքում միշտ դիմիր ավելի փորձ-
վածների ոգնության:

15. Ուշք դարձրու աշխատանքներիդ առողջա-
պահության.—

ա) Կարդալիս լուսը ձախ կողմից պետք ե
լինի:

բ) Նստիր հանգիստ, ուղիղ՝ առանց մեջքդ
կոացնելու:

գ) Հոգ տար, վոր աշխատանքներդ մաքուր
ողում, յեթե հարմար ե՝ բացողյա կատարվեն:

16. Ի՞նչ պետք ե կարդաս, վոր հողագործա-
կան աշխատանքներդ ավելի արդիունք տան և
դու գիտակից խորհրդակին քաղաքացի դառնաս:

Կարդա՝

ա) «Դեպի նոր կյանք»,

բ) «Խորհրդակին գյուղ»,

գ) «Մաթ. աշխատանքի գիրք», կազմեց Մ.
Գասպարյան,

դ) «Սոցիալիստական արշավ», հնգորեւ թերթ,

յե) «Մաճկալ»,

զ) «Ավանգարդ»,

Ե) «Հայաստանի Աշխատավորուհի»,
Ը) «Խորհրդային Հայաստան»-ից քեզ մատչելի
հոդվածները (այդ մասին խորհուրդ հարցրու
իմացողներից):

թ) Քաղաքական, կոռպերատիվ, փոկի, վար-
կային ընկերությունների մասին և այլն գրքույկ-
ներ, վոր կան ձեր խրճիթ-ընթերցարանում և
քեզ հարմար են (այդ իմանալու համար դիմիք
քեզնից ավելի գիտցողի խորհրդին):

17. Կատարածիդ մասին զեկուցում (հաշիվ տուր,
պատմիր) տուր ընկերներիդ շրջանում, մտքերի
փոխանակություն ունեցիր ուրիշների հետ:
Զեկուցումդ պատրաստիր նամակիս 7-ըդ, 8-ըդ
և 9-ըդ կետերն ի նկատի առնելով:

18. Կարդալուն շատ ենպաստում նաև գրելը,
վորի մասին առանձին ավելի մանրամասն կխոսեմ:

Բ. ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵԼ ԳՐԵԼ

19. Ինչ ասված ե կարդալու մասին 1, 2, 3,
4, 7, 12, 13, 14 կետերում, վերաբերում ե նաև
գրելուն, վոր կարիք չկա այստեղ մեկել կըկնե-
լու: Այստեղ դրան կավելացնեմ հետևյալ ցուց-
մունքները. —

20. Նախ քան գրել սկսելը՝

ա) Պարզիր քեզ համար, թե վհրն ե այն հիմ-
նական խնդիրը, վորի մասին գրելու իես և ըստ
այնմ դիր վերնագիրը:

բ) Կազմիր պլան (ծրագիր) թե առաջ ինչ

մասին և ինչ ես ասելու, հետո ինչի: Ըստ այնմ
կորոշվեն գրվածքիդ մասերը:

գ) Ասելիքներդ այնպես դասավորիր, վոր գըլ-
խավոր ինդիրը լավ պարզաբանվի: Խուսափիր
յերկարեցնելուց, կրկնություններից:

Այս աշխատանքներից հետո միայն սկսիր գրել:
Գրելուց հետո ուշադրությամբ կարդա գրածդ,
աես՝ կարիք չկա փոփոխելու:

21. Մի հոդված (կամ գիրք) կարդալիս դիտիր,
թե՝ ա) վնրն ե հեղինակի գլխավոր միտքը, թ)
առաջ ինչի մասին ե խոսում, հետո ինչի, և
վերնագիր դիր գլուխներին, մասերին:

Այս աշխատանքը կոզնի քեզ, վոր դու յել,
որինակ վերցնելով հեղինակին, լավ գրել սո-
վորես:

22. Աշխատիր, վոր առանձին խոսքերդ լինեն
կարճ, բայց լրիվ և պարզ արտահայտեն մտքերդ:
Դրա համար պետք ե ուշք դարձնես նաև կե-
տադրության:

23. Կարդալիս ուշք դարձրու, թե գրքի լեզ-
վով ինչպես են այսինչ կամ այնինչ միտքն ար-
տահայտում, և գրելիս գործադրիր:

24. Առանձին բառերն ուղիղ գրելու համար
պետք ե՝ արտագրություն անես: Արտագրելուց
առաջ պետք ե կարդաս լրիվ խոսքը (մինչև վեր-
ջակետը), լավ հասկանաս միտքը: Դիտիր, թե
դժվար բառերն ինչպես են գրվում: Հետո, յերբ

վստահ ես, թե այլես սխալ չես անի, սկսիր ար-
տագրել ամբողջ խոսքերով: Տառ-տառ, վանկ-վանկ,
բառ-բառ արտագրելը մնասակար ե, վորովհետեւ
ոգուտ չունի և հոգնեցնում ե:

25. Կարիք չկա ամեն բան արտագրելու: Ար-
տագրիր հավանածդ բաները՝ սրամիտ խոսքեր,
իերգեր, լոգունգներ, գեղեցիկ նկարագրություն-
ներ, կտորներ, գործնական գրությունների որի-
նակներ, քեզ համար պետքական տեղեկություն-
ներ ու գիտելիքներ և այլն:

26. Համառոտ, գրավոր պատմիր կարդացածդ.
բայց այնպես, վոր միշտ հնարավորություն ու-
նենաս ստուգելու, թե այսինչ բառը գրքում
ինչպես ե գրված: Գրքից շատ մի հեռանա, վոր
գիրքը քեզ ոգնի, մինչև վոր կարենաս հետզհե-
տե առանց գրքի իել ուղիղ գրել:

27. Շատ կարդա և կարդալիս ուշք դարձրու
նաև բառերի (մանավանդ դժվար բառերի) ուղ-
ղագրության վրա: Այդ դժվար բառերից կազ-
միր ուղղագրական բառարան: Ամեն գրելիս
ոգտվիր կազմածդ ուղղագրական բառարանից:

28. Առնասարակ գրելուց առաջ աշխատիր
ճիշտն իմանալ, ապա գրել: Ոգնության կանչիր
գիրքդ, կազմածդ բառարանը, ճեր ուսուցչին, կամ
մի այլ իմացողի: Թող քո ճերքը, աչքը և ա-
կանջը սկզբից ևեթ միայն ուղիղն իմանան:

Յեթե սխալ ել ես ալել, — վոչինչ, լետ մի նա-
յիր, վորովհետև այդ կառաջացնի քո մեջ վախ
և անվստահություն։ Քո աչքը միշտ դեպի առաջ
թող ուղղված լինի։

29. Բայց ինչպես իմանաս, թե վոր բառերը
կարող ես դու սխալ գրել, վորպեսզի առաջուց
ստուգես, ապա գրես։ Այդ դու կարող ես դի-
տել կարդալիս. — վոչ բոլոր բառերն են այնպես
գրվում, ինչպես արտասանվում են։ Այն բառերը,
վոր ուրիշ կերպ ենք արտասանում, ուրիշ կերպ
գրում (կարդալիս այդ դիտիր), պետք ե գրե-
լուց առաջ ստուգես։


30. Ուշք դարձրու, վոր ձեռագիրդ հեշտ և ա-
րագ կարդացվի, լինի մաքուր և գեղեցիկ։ Դրա-
նով դու այն ոգուտը տված կլինես, վոր ժամա-
նակ և աշխատանք կտնտեսվի, վորովհետև գրա-
ծըդ կարող են շատերը կարդալ։ Դրում ես մի ան-
դամ, գրածդ պիտի կարդացվի (ուրիշների, նույն
իսկ քո կողմից) շատ անգամ։ Յեթե գրելիս
չշտապես և մի քանի ըոպե ավելի գործադրես,
վոր գրածդ հեշտ կարդացվի և գեղեցիկ լինի,
ապա այդ մի քանի ըոպելի կորուստով հետա-
գալում ժամեր կտնտեսես և ուրիշներն ել ու-
րախությամբ կկարդան գրածդ։

Ց Ա Ն Կ

b2

I. Պլանային-ծրագրական	3
II. Վարժույթների մերոդիկան	16
ա. Աշխատանք գրքով	16
բ. Աշխատանք լրագրով	22
գ. Բանավոր և գրավոր խոսքի զարգացում	24
դ. Խմաստալից ընթերցանություն	31
լե. Ուղղագրություն	38
զ. Քերականություն	44
III. Ինքնազարգացում	50
ա. Ինչպես սովորել կարգալ	50
բ. Ինչպես սովորել գրել	56





ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱԱ ՀԻմնարար Գիտ. Գրադ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038838

(109) 851
Գիրե կ 40 կոպ. 2 լ. (մաս.)

A 3936



РОДНОЙ ЯЗЫК
В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫХ ШКОЛАХ
ДЛЯ ВЗРОСЛЫХ

Госиздат ССР Армении
Эревань, 1930 г.
